

Իրավաբանական անձանց վարկավորման համար պահանջվող նախնական փաստաթղթերի ցանկ

1. Դիմում կազմակերպության բլանկի վրա, որտեղ նշվում է վարկի տեսակը, գումարը, ժամկետը, արժույթը, նպատակը, ապահովվածության ձևը;
2. Վարկային հայտ;
3. Վարկային, գրավի և այլ պայմանագրերը ստորագրող անձի իրավասությունը հավաստող փաստաթուղթ /անհրաժեշտության դեպքում/;
4. ՀՎՀՀ;
5. Կանոնադրության և առկայության դեպքում կանոնադրության փոփոխությունների պատճենները (իսկականի հետ ճիշտ է նշումով, ստորագրված և կնքված);
6. Պետական ռեգիստրի վկայական (իսկականի հետ ճիշտ է նշումով, ստորագրված և կնքված);
7. ՍՊԸ-ի, ԱԿ-ի դեպքում՝ տեղեկանք ընկերության մասնակիցների (անդամների) և տնօրենի վերաբերյալ, տրված պետական ռեգիստրի կողմից;
Բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ քաղվածք ռեեստրից ընկերության բաժնետերերի վերաբերյալ, տրված ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից;
8. Հիմնադիրների (բաժնետերերի, անդամների) և տնօրենի անձնագրերի պատճենները;
9. Իրավասու մարմնի որոշումը վարկ ստանալու և գրավադնելու վերաբերյալ;
10. Վերջին հաշվետու ժամանակաշրջանի /անհրաժեշտության դեպքում նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանի/ ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված Պետական եկամուտների կոմիտեի կողմից;
11. Տեղեկանք տվյալ պահին պետական բյուջեի նկատմամբ առկա պարտավորությունների վերաբերյալ;
12. Մատակարարների և սպառողների հետ կնքված պայմանագրերի պատճենները /առկայության դեպքում/;
13. Տեղեկանք տվյալ պահին ընկերության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի վերաբերյալ՝ նշելով առաջացման և մարման ժամկետները;
14. Տեղեկանք ընկերության հասույթների վերաբերյալ՝ վերջին 12 ամսվա համար ըստ ամիսների;
15. Տեղեկանք ընկերության ծախսերի վերաբերյալ՝ ըստ հիմնական ծախսային հոդվածների, վերջին 12 ամսվա համար ըստ ամիսների;
16. Տեղեկանք տվյալ պահին ապրանքանյութական պաշարների մնացորդի վերաբերյալ;
17. Այլ բանկերում ունեցած հաշվարկային հաշիվների քաղվածքներ՝ վերջին 12 ամսվա համար;
18. Դրամական հոսքերի կանխատեսման հաշվարկը;
19. Առդիտորական կազմակերպության եզրակացություն /առկայության դեպքում/;
20. Այլ փաստաթղթեր Բանկի պահանջով:

Ծանոթություն՝ 13, 14, 15 և 16 կետերում նշված տեղեկանքները ներկայացվում են ընկերության բլանկի վրա՝ ստորագրված ընկերության տնօրենի, գլխավոր հաշվապահի կողմից և կնքված:

Անշարժ գույքի գրավադրման դեպքում անհրաժեշտ փաստաթղթեր՝

1. Անշարժ գույքի սեփականության վկայականի պատճենը;
2. Անշարժ գույքի ձեռք բերման հիմքերի պատճենները;
3. Գրավատուի (ներքի) անձնագրի պատճենը;
4. Գրավատուի, բացակայող կամ այլ համասեփականատիրոջ կնոջ (ամուսնու) նոտարական կարգով հաստատված համաձայնագիրը (լիազորագիրը) գրավ դնելու և գրավի պայմանագիրը ստորագրելու վերաբերյալ (եթե որպես գրավատու հանդես է գալիս ֆիզիկական անձ), բացառությամբ այն դեպքերի, երբ նշված համաձայնությունը (լիազորագիրը) չի պահանջվում օրենքով;
5. Գրավատուի ամուսնական կարգավիճակը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում), իսկ բացակայության դեպքում համապատասխան հայտարարություն;
6. Գնահատման ակտ:

Ծանոթություն՝

Վարկի հաստատման դեպքում ներկայացվում է նաև՝

- ՀՀ Կառավարությանն առնօրե Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված միասնական տեղեկանք;
 - Սեփականության վկայականի բնօրինակը:
- Եթե որպես գրավատու հանդես է գալիս իրավաբանական անձ, ապա վերը նշված 3, 4, 5 կետերում նշված փաստաթղթերը չեն պահանջվում:

Տրասպորտային միջոցների գրավադրման դեպքում անհրաժեշտ փաստաթղթեր՝

1. Տրասպորտային միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը;
2. Գրավատուի անձնագրի պատճենը;
3. Նոտարական կարգով հաստատված լիազորագիր՝ գրավ դնելու և գրավի պայմանագիրը ստորագրելու վերաբերյալ, եթե Գրավատուն բացակայում է;
4. Գրավատուի ամուսնական կարգավիճակը հաստատող փաստաթուղթ՝ առկայության դեպքում նաև կնոջ (ամուսնու) համաձայնությունը, իսկ բացակայության դեպքում՝ համապատասխան հայտարարություն;
5. Գնահատման ակտ /Բանկի պահանջով/:

Ծանոթություն՝

Վարկի հաստատման դեպքում ներկայացվում է նաև՝

- տեղեկանք համապատասխան իրավասու մարմնից, որ գրավադրվող տրանսպորտային միջոցը կալանքի տակ չէ;
 - Տրասպորտային միջոցի տեխնիկական անձնագրի բնօրինակը;
 - Ապահովագրության պոլիս /Բանկի պահանջով/:
- Եթե որպես գրավատու հանդես է գալիս իրավաբանական անձ, ապա վերը նշված 2, 3, 4 կետերում նշված փաստաթղթերը չեն պահանջվում:

Հիմնական միջոցների գրավադրման դեպքում անհրաժեշտ փաստաթղթեր՝

1. Գրավադրվող հիմնական միջոցների ցանկը՝ նշելով անվանումը, քանակը, մակնիշը, արտադրության տարեթիվը, արտադրող երկիրը, սերիական համարը;
2. Հիմնական միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը և ձեռք բերման հիմքերը;
3. Գնահատման ակտ:

Ծանոթություն՝

Վարկի հաստատման դեպքում ներկայացվում է նաև՝

- Ապահովագրության պոլիս /Բանկի պահանջով/;
- Հայտարարություն, որ գրավադրվող գույքը սեփականության իրավունքով պատկանում է Գրավատուին և կալանքի, արգելանքի տակ չի գտնվում:

Շրջանառու միջոցների գրավադրման դեպքում անհրաժեշտ փաստաթղթեր՝

1. Գրավադրվող շրջանառու միջոցների ցանկը՝ նշելով անվանումը, չափի միավորը, քանակը, գինը, գումարը;
2. Շրջանառու միջոցների ձեռք բերման հիմքերը;
3. Գնահատման ակտ:

Ծանոթություն՝

Վարկի հաստատման դեպքում ներկայացվում է նաև՝

- Ապահովագրության պոլիս;
- Հայտարարություն, որ գրավադրվող գույքը սեփականության իրավունքով պատկանում է Գրավատուին և կալանքի, արգելանքի տակ չի գտնվում:

Եվ այլ փաստաթղթեր Բանկի պահանջով